19 մայիսի 2016 թվականի N 521 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 935-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N 935-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 2 հավելվածի «2. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ» կետի «Նյութատեխնիկական մատակարարման և շահագործման բաժին» բաժնի 11-րդ կետի 3-րդ սյունակում «8» թիվը փոխարինել «10» թվով.

2) որոշման N 2 հավելվածի «3. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներ» կետի «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի 4-րդ

կայազորային քննչական բաժնի տարածքային բաժին» բաժնի 5-րդ կետի 3-րդ սյունակում «1» թիվը փոխարինել «4» թվով.

3) որոշման N 2 հավելվածի «4. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի և վարչական շրջանների քննչական վարչության տարածքային բաժիններ» կետի՝

ա. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի քննչական վարչության տարածքային բաժին» բաժնի 6-րդ կետի 3-րդ սյունակում «1» թիվը փոխարինել «6» թվով,

բ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի տարածքային բաժին» բաժնի 4-րդ կետի 3-րդ սյունակում «1» թիվը փոխարինել «2» թվով.

4) որոշման N 2 հավելվածի «5. Մարզային առանձնացված ստորաբաժանումներ» կետի՝

ա. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Կոտայքի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«

6.	Հավաքարար	3	

»,

բ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Արարատի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«

6.	Հավաքարար	2	

»,

գ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Արմավիրի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«

6.	Հավաքարար	3	

»,

դ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Արագածոտնի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«	5.	Հավաքարար	1	»,

ե. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Շիրակի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժնի 6-րդ կետի 3-րդ այունակում «1» թիվը փոխարինել «2» թվով,

զ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Լոռու մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«	6.	Հավաքարար	4	»,

է. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Տավուշի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«	6.	Հավաքարար	2	»,

ը. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«	6.	Հավաքարար	6	»,

թ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Վայոց ձորի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«	4.	Հավաքարար	2	»,

ժ. «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի Սյունիքի մարզային քննչական վարչության տարածքային բաժին» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«	6.	Հավաքարար	3	»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ